

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԶԵՌԱԴՐԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Նախնական հաղորդագրութիւն)

Հայ ձեռագիրների մէջ ինքնուրոյն և թարգմանական մատենագրութեան վերաբերեալ շատ նիւթեր կան, մինչև այժմ բոլորովին անյայտ մնացած բանասիրութեան: Ներկայ համառօտ հաղորդագրութեամբ կամենում ենք տեղեկութիւն տալ այն մի քանի նորութիւնների մասին, որ յաջողուել է մեզ գտնել պատերազմի քննարկում Տաճկա-Հայաստանից էջմիածին բերուած ձեռագիրների մէջ:

Դոցանից մէկը բերուած է Լիմ անապատից, և այժմ կրում է 446 համարը: Ութերորդ դարու առաջին քառորդի նշանաւոր մատենագիր Ստեփանոս Սիւնեցու չորս աւետարանիչների մեկնութիւնը «Ստեփանոսի Հայոց Իմաստասիրի և Սիւնեաց եպիսկոպոսի կարճառաւտ մեկնութիւն չորից աւետարանչացն Քրիստոսի» վերնագրով: Նոյն հեղինակի մի երկրորդ գործը՝ «Պատճառք և թելադրութիւն Ստեփաննոսի Իմաստասիրի. Առաջին տեսլեանն Եզեկիէլի» գտնուում է Վարազդից բերուած և այժմ 1298 համարը կրող ձեռագրի մէջ: Ստեփանոսի այդ աշխատութիւնների մասին տեղեկութիւն ունէինք միայն նորա վկայարանութիւնից, Ստեփանոս Օրբէլեանից և Արասայ օրդի Գրիգորի Պատճառաց գրքից, բայց մինչև այժմ երևան չէր հանուած ձեռագիրների մէջ: Ստեփանոս Սիւնեցին հայ բանասիրութեան աւելի յայտնի է Կիւրեղ Աղէքսանդրացու Պարապմանց և Գանձուց գրքերի, ինչպէս և Դիոնիսիոս Արիսպագացուն վերագրուած երկերի թարգմանութեամբ: Նախ Կալկաթայում և ապա Դիրք թղթոցի մէջ տպագրուած է նորա պատասխանը Դերմանոսի թղթին, ապա «Արարատի» մէջ 1902 թուին և առանձին տեսարակով Միաբանը հրատարակեց նորա վիճարանական մի փոքրիկ գրուածքը անապականութեան խնդրի մասին՝ եկեղեցական հայրերի վկայութիւններով. վերջապէս նորերս նորա ժամապաշտութեան վերաբերեալ աշխատութիւններով զբաղւում է հ. Սահակ վարդապետ Ամատունին «Արարատի»

մէջ: Բայց Ստեփանոս Սիւնեցին յայտնի է իբրեւ նշանաւոր մեկնարան Արարածոց, Յօրի, Եղեկիէլի և չորս աւետարանիչներին գրքերի, որոնց ազդեցութիւնն ու հետքերը նկատելի են մեր մատենագրութեան մէջ, բայց անյայտ իրենց ամբողջական բնագործը:

Հ. 446 ձեռագիրը պահել է Ստեփանոս Սիւնեցու յիշատակարանը չորս աւետարանիչների մեկնութեան վերջում. ահա այդ յիշատակարանը. «Հրաման առեալ ի քրիստոսասէր հայրութենէդ ձերմէ, ով պատուական քահանայապետ, շարագրեցի ըստ կարողութեան, որ ինչ ի չորս աւետարանիչսդ, ընտրեալ ի յառաջագոյն մեկնչացդ, և որ ինչ մեզ թուեցաւ դժուարապատում ի մեկնութիւն. ի մաթէոսեան աւետարանն գրեցաւ ըստ կարգի, իսկ ի յայլ աւետարանիչսդ՝ որ ինչ մեկուսանայր ի մաթէոսեան աւետարանէն. և զայս ընձեռեցի, ձերոց հրամանի հնազանդեալ, և ազաչեմ մաղթելով, զի ի քրիստոսընկալ յաղաւթս ձեր յիշեալիք զիմ անարժանութիւնս, զի թերեւ արժանաւորիցիմ սակաւիկ մասն ունել ի ձեր հանդիսէդ: Ո՛վ է այդտեղ յիշուած քահանայապետը, առ այժմ դժուար է մեզ հաստատութեամբ որոշել, բայց վկայարանութեան և Օրբէլեանի ցուցմունքներին հետեւելով, անհաւանտեալն չէ, որ Դաւիթ կաթողիկոսը լինի, Օձնեցու յաջորդը՝ Յամենայն դէպս այդ երկը նա գրել է Բիւզանդիոնից վերադառնալուց յետոյ. հեղինակը փայլում է իւր հմտութեամբ և օտար լեզուների գիտութեամբ:

Ձեռագիրն էլ արժանի է յատուկ ուշադրութեան հնագրական տեսակէտով. գրուած է Կամբջաձորի նշանաւոր վանքում (Կադգուանի մօտերքը) «թվ. Ո՛ր» (1155 փրկչ.), շեղագրով, Կիւրակոս գրչի ձեռքով:

Աստանաւր յանգ ելեալ կատարեցաւ աստուածապատում գրկունքս, մեկնութեան սուրբ աւետարանին Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ յերկուց աստուածարեալ արանցն մեկնաւղաւրէն բացատրեցաւ. ի նանաէ վարդապետէ Ասորւոց, և ի Ստեփանոսէ վարդապետէ Հայոց, ի սուրբ և ի գերահռչակ ուխտս Կամբջաձոր կոչեալ, ի գաւառիս Աշարունեաց, և ընդ հովանեաւ աստուածընկալ և առաքելական սուրբ խաչիս որ ի սմա, աղբիւր շնորհացն Քրիստոսի ի Հայաստան աշխարհիս պարգևեալ մեզ ի փրկչէն Քրիստոսէ. և գրեցաւ ի ձեռն Կիւրակոսի անպիտան ծառայի Քրիստոսի, նախահոգութեամբ և խնամով սուրբ և ամենազով հաւրս Յովանիսի, որոյ Աստուած եղիցի վարձահատոյց և աստեաւքս զանվախճանն պարգևեացէ կեանս ի Քրիստոս Յիսուս ամէն:

Ստեփանոս Սիւնեցու նորագիւտ երկրորդ աշխատութեան ձեռագիրը, Վարագից բերուած, այժմ № 1298, գրուած է 1280 թուին, զանազան դրիչների ձեռքով. «յամի Զ. երորդի. Ի. երորդի Թ. երորդի թուականի հաոց»։ Մի երկրորդ յիշատակարան մեզ ցուցում է տալիս որոշելու ստացող վարդապետը, նոյն իսկ գրչութեան տեղն ու գրիչը, բանասիրական և հնագրական միջոցներով։ «Զարժանա ... զարդիւնակատար վարդա(պե)տն Ներսէս յիշել յողորմութիւնն Աստուծոյ, ով պատուականք, որք հանդիպիք այսմ տառի։ Ընդ սմին և զեղկելի գրիչս և խոշորութիւն գրոյդ թողութիւն և ձեզ յիշողացդ և մեզ աշխատողացս բարի վարձս. և նշնջեցելոցն հանդիստ և ողորմութիւն ի քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս ամէն»։ Այստեղ յիշուած Ներսէս վարդապետը Գլաձորի նշանաւոր վարդապետարանի հիմնադիրն է, որ մեռաւ 1284 թուին։ Այս ձեռագիրը ձեռքի տակ է ունեցել և մեծ շափով օգտուել է նորա այլ և այլ մասերից նոյն Ներսէս Մշեցու աշակերտն ու յաջորդ՝ Եսայի Նշեցին՝ 1303 թ. իւր Եզեկիէլի մեկնութեան մէջ։

Հ. 1298 ձեռագիրը բացի Ստեփանոսի Եզեկիէլի մեկնութիւնից բովանդակում է նաև նոյն մարգարէութեան Ոսկեբերանի († 407), Եփրեմ Ասորու († 373 թ.) և Կիւրեղ Աղէքսանդրացու († 444) մեկնութիւնները, բոլորն էլ անյայտ հայ բանասիրութեան։ Ոսկեբերանի, ինչպէս և Կիւրեղ Աղէքսանդրացու, մեկնութեան բնագրի գոյութեան մասին տարաբաղդարար հաստատ բան տեսել չենք կարող մեր ձեռքի տակ եղած աղբիւրներով, բայց Եփրեմի մեկնութեան ասորերէն բնագիրը տպուած է Հոռմի հրատարակութեան մէջ<sup>\*</sup>։ Ըստ Զարրհանալեանի Վանայ ձեռագիրներից մէկի մէջ պէտք է լինի այս մեկնութեան հայերէն մի այլ օրինակ. (Մատ. Հայկ. Թարգ. 1879, եր. 461)։ Ի՞նչ արժէք ունի և ի՞նչ կապ հայ թարգմանութիւնը բնագրի հետ, ասորագէտներին կմնայ պարզել։ Յամենայն դէպս հետաքրքրական է այդ երկը հայ բանասիրութեան համար, որովհետև հետքեր է թողել մեր մատենագրութեան մէջ։ Եփրեմի նշանակութիւնը մեծ է ընդհանրապէս մեր հոգևոր կեանքի զարգացման պատմութեան մէջ և նորա երկերից շատերը դեռ ևս տպագրութեամբ մատչելի չեն դարձել հայ բանասիրութեան։ Կիւրեղ Աղէքսանդրացու գործերից շատերը թարգմանուած են նախնեաց ձեռքով. բայց նորա մեկնաբանական գրուածքները չեն արժանացել այնպիսի ուշադրութեան, ինչ-

\* Spiegel. RE. Ephräm.



պէս դաւանարանական-վիճարանական թղթերն ու երկերը: Առայժմ յիշատակելի են դոցանից Ղևտիկոնի մեկնութեան ընդարձակ հատուածները Գ. ց. № 102 նշանաւոր ձեռագրում, 971 թուի զրուած: Բայց առաւել կարևոր է Եղեկիէլի մեկնութիւնը իբրև ամբողջութիւն: Եւայի նշեցին իւր վերոյիշեալ աշխատութեան մէջ յաճախ օգտուում է եկեղեցական այս հայրերի մեկնութիւններից, երբեմն յիշելով և հեղինակների անունները:

Կարևոր նշանակութիւն ունին ազգային մատենագրութիւնից էլ աւելի ընդարձակ սահմաններում Որոգինէսի անուան հետ կապուած նորութիւնները: Նորա անունով մեծ կամ փոքր չափով հատուածներ յայտնի են հայ բանասիրութեան: Դեռ ևս Զարրհանալեան իւր Մատենագարան հայկ. թարգմանութեան մէջ բերում է Ղևտիկոնի մեկնութեան մի քանի հատուածները, որոնք ծագում են անշուշտ № 102 նշանաւոր ձեռագրից. որովհետեւ ոչ միայն հատուածների կարգն է նոյն, այլ և ընդհատում են այնտեղ, որտեղ № 102-ը: Զարրհանալեանի մէջ պակասում են միայն երկու հատուած, մի երկուսն էլ ոչ ամբողջութեամբ, այլ կըրհատուած են մէջ բերուած: Զարրհանալեանին յայտնի էր և Որոգինէսի անունով Տեաքած Երզնկացի մեկնութիւնը, ոչ ընդարձակը, որ թարգմանել է Ռուփին և ոչ Հերոնիմոսի թարգմանած երկու ճառերը, այլ տարրեր բնագրից: Այս հանգամանքը և մասամբ թարգմանական լեզուն կասկածի առիթ են տուել բանասէրներին, բայց չպէտք է մոռանալ, որ Օրիգինէսի մեկնարանական երկերն ու ճառերը Երզնկացի մասին մասամբ կորած են, ուրեմն և վաղաժամ է այդպիսի եզրակացութեան հասնել: Հանգուցեալ Կարապետ Կախկոպոսը նոյնպէս «Արարատի» մէջ, 1895 թ. հրատարակել է «Ի տեսութիւն Եղեկիէլի» հատուածը, իսկ նորանից առաջ 1888 թուին «Ապաշխարութիւն Որոգինէի վարդապետի» վերնագրով զրուածքը հրատարակուած է դարձեալ նոյն ամսագրում: Մի այլ հատուած «Պատճառ երբայեցւոյ թղթին» պահուած է Եւսերիոսի եկեղեցական պատմութեան մէջ: Կան նաև հատուածներ կաթողիկէայց թղթերի մեկնութեան:

Նորերս մեզ յաջողուել է գտնել Որոգինէսի երկու ուրիշ ճառերի թարգմանութիւնը՝ Կարապից բերուած, այժմ № 1513 ձեռագրի մէջ, զրուած 1371 թուին, Մկրտիչ քահանայի ձեռքով: «Քաւսք Որոգինի. զիրք հինգերորդ. Սկս. «Բանք աստուածայինք», որ Մենդոց զրքին է վերաբերում, Քամարի և Յուդայի յարաբերութեան (Մենդ. ԼԸ. 17—18) այլաբանական մեկնու-



թիւնը: Երկրորդը դարձեալ նոյն ձեռագրի մէջ. «Խաւար Որոգինի ի Յոր. Դիրք հինգերորդ. Ասացուած վասն վիշապին, որ ի Յոր պատմի, ի Դաւիթ և յայլս»: Վերջապէս էջմիածնի № 1983 ձեռագրում կայ մի ուրիշ գրուածքի թարգմանութիւն. «Որոգինի ասացեալ ի տեսութիւն այլաբանութեամբ» վերնագրով և «Երանելին Յոր եօթնամեա ցաւօքն» սկսուածքով: Այս գրուածքներից վերջին երկուսը գործադրել է Վանականը իւր Յորի մեկնութեան մէջ համարեա բառացի կերպով: Վիշապի հատուածը ծանօթ էր և Յովհաննէս Սարկաւազ վարդապետին: Տարաբաղդարաբ ձեռագիրների բացակայութեան պատճառով հնարաւորութիւն չունինք մեր հետազօտութիւնները առաջ տանել աւելի վաղ ժամանակների համար:

Որոգինէսի երկերի թարգմանութիւնը կատարուած է նախնեաց ձեռքով մեծ շափով, Բացի վերոյիշեալ տեղեկութիւններից ապացոյց կարող է լինել Ստեփանոս Սիւնեցու վկայութիւնը վերոյիշեալ նարագիւտ երկերի մէջ: Մեկնութիւն շորից աւետարանչացն աշխատութեան մէջ Սիւնեցին Մատթ. ԺԳ. 12-ի համար հետևեալն է գրում. «Դտաք ի մեկնութենէ Իւրոգենի (կարող է լինել «Ուրոգենի») ի Մաթէոս աւետարանիչ յերկոտասաներորդ գիրան, եթէ ամենայն տունկ, զոր տնկեաց հայրն Միածնի Որդւոյն Աստուծոյ ի յայն տունկ միածնին վարդապետութիւնն առաւելացի. և մի ոք կարծեսցէ դտունկն Պաւղոսի, և զաճելն Ապաւղոսի արտաքոյ գոլ տնկոցն Աստուծոյ. զի ամենայն որ ըստ հռոյիցն Աստուծոյ է տնկեալ, տունկ Աստուծոյ կոչի. և յաւելոյ յայդպիսի տունկ. զայդպիսի տունկ որ ունի, յաւելցի այնպիսոյն. բայց զոր ոչ տնկեաց հայրն երկնաւոր, այլ ընդդիմակացն ի հողւոջ, և զայն զոր ունի, բարձցի ի նմանէն. զայդ Ուրիգինեա այդպէս մեկնեաց եւ ես ոչ ընդդիմանամ, բայց կարծեմ ըստ այժմեան մեկնութեանս...» Մաթէոսի մեկնութեան բնագրից մնացել են միայն Ժ—ԺԷ գրքերը և հատուածներ, ուրեմն և այդ երկի ամբողջութեան գիւտը կունենայ իւր կարևոր նշանակութիւնը: Ամբողջ երկը բաղկացած էր 25 գրքերից: Կայ Լատիներէն վերամշակութիւնը նոյն երկի 35 գրքից բաղկացած, որ բնագրի կամ թարգմանութեան տեղը բռնել կարող չէ\*:

Ստեփանոսի միւս գործի՝ Եզեկիէլի մեկնութեան մէջ մի ուրիշ թանգագին տեղեկութիւն կայ Որոգինէսի և Հիպոլիտի Եզեկիէլի մեկնութիւնների գոյութեան մասին Ը. դարում: Հեղինակը Եզեկ. ԻԸ 12—16-ի համար ասում է. «արդ զայս ամենայն և որ ինչ սոցին նման, զիարդ է հնար յաղաղս մարդոյ իմանալ, աստ-

\* Harnack. Gesch. des altchristlichen Litteratur. 1893. հր. 366.

ցին առաջին մեկնիչքն՝ Որոգինէս և Հիպոդիոսն՝ համայնցի և յայլոց ոչ սակաւքն: Եզեկիէլի մեկնութիւնը բազկացած էր 26 դրօշից և միայն փոքրիկ հատուած է մնացել բնագրից\*:

Այս տեղեկութիւններից երևում է, որ նախնեաց ձեռքով թարգմանուած էին Որոգինէսի հետևեալ աշխատութիւնները, բացի Երզնգոցի երկու հատերից, նաև Մնդոց, Ղևտիկոնի, Յորի, Եզեկիէլի, Մատթէոսի և Կաթուղիկեայց թղթերից, զոնէ, Յակոբոսի և Պետրոսի Ա. թղթերի մեկնութիւնները: Այս երկերի ամբողջական թարգմանութիւնների գիւտը աւելի կմեծացնէր և կալայծառացնէր մեր նախնեաց լուսոյ պսակը: Երոզհետև ոչ միայն կորած են դրանց բնագիրները, այլ և յայտնի չեն մինչև այժմ ոչ մի օտար թարգմանութեամբ (բացի Ռուփինի և Յիերոնիմոսի վերոյիշեալ թարգմանութիւններից): Իսկ Որոգինէսը Գ. դարու քրիստոնէական եկեղեցու ամենամեծ գիտնականն է, որի ամեն մի կորած երկի գիւտը համաշխարհային արժէք կունենար գիտութեան համար: Հէնց այս նպատակով էլ պատրաստել ենք «Մնացորդք բանից Որոգինեայ» վերնագրով աշխատութիւնը, նախ եղած նիւթերը մատչելի դարձնելու գիտութեան և երկրորդ խթան լինելու՝ զըսել այն թարգմանութիւնները, որոնց գոյութիւնը հաստատուած է մեր մատենագրութեան մէջ:

Գաւեգին Ժ. վարդապետ

Էջմիածին

13 փետր. 1917 թ.



\* Անդ. եր. 364.